


Տարեկան գին՝ 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան միջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».



Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՄԱՐԻԱՍ ԵԳՕՐԵԱՆ և ԳՐԻԳՈՐ ԴԱԽԹԵԱՆ ՏԵՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆՆԵՐԸ սրտի ցա-
ւով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջին ամուսնու և երկ-
րորդի հօր, ԴԱՎԻԴ ՆԻԿԻՏԻՉ ՏԵՐ-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆԻ մահը, որը տեղի է ունեցել օ-
գոստոսի 19-ին, Հոգեհանգիստը ամեն օր, 7 ժամին երեկոյեան Թուրքական օր-
թիւնը տեղի կունենայ օգոստոսի 24-ին, հինգշաբթի օր, առաւօտեան 10 ժամին,
սեփական տնից, որ գտնվում է Գրաֆսկի փողոցի վրա, գէպի վանքի մայր եկե-
ղեցին:

1—2

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Հողային հարցը Անդրկովկասում. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր. — ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Պարսից շահի ճանապարհորդութիւնը.
Արտաքին լուրեր. — ԻՍՐԱԵՐ ԼՈՒՐԵՐ — ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Տպաւորութիւններ:

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԱՆԿՐՈՂԱԿԱՍՈՒՄ

Այն զանաւորները, որոնք լսվում են
Անդրկովկասի ամեն կողմերի գիւղական
ազգայնականութեան բերանից, թէ յիշեալ
ազգայնականութեանը պակաս են վարելու հո-
գեր, — շատ իրաւացի են:

Բայց հարցը դրանումն է, որ հողերը
նոյն չափով են մնացել, իսկ գիւղական
ազգայնականութիւնը մեղանում, ամեն տեղ
բազմացել է: Մի և նոյն ժամանակ մեր
գիւղական ժողովուրդը սովոր լինելով նա-
հապետական, հին ձեռն հողագործութեան,
ընդարձակ հողերի վրա ցորեն ցանելուն, չը
գիտէ յարմարվել ժամանակի պահանջնե-

րին, չը գիտէ փոխել իր հողագործութեան
ձեւը, չը գիտէ ընդարձակ (extensiv)
հողագործութեան ձեւից անցնել սահմա-
նափակ (intensiv) հողագործութեան ձե-
ւին: Նոյնանման երեւոյթ կրկնվել է ամեն
երկրում, ամեն տեղ ժողովուրդը մի ժա-
մանակ այնքան բազմաթիւ չէր, և ապա
հողերը ընդարձակ լինելով, բաւականու-
թիւն էին տալիս գիւղական ազգայնակու-
թեան լայն, ընդարձակ, անփոք, անհոգ
հողագործութեան... Ազգայնականութիւնը
բազմանալով, իսկ հողերը նոյն չափով
մնալով, եւրօպական քաղաքակրթութեան
օգնութեամբ եւրօպացի գիւղացին իմացաւ
հեղահատէ յարմարվել ժամանակի պա-
հանջման, իմացաւ ընդարձակ հողագոր-
ծութեան տեղ մտնել սահմանափակ հո-
ղագործութիւն, օրինակ, նոյն տարածու-
թեան հողի վրա փոխանակ ցորեն ցանե-
լու, սկսեց ցանել կարտօֆիլ, որը հողի ա-
ւելի փոքր տարածութեան վրա նոյնքան
արդիւնք է տալիս, որքան ցորենը երկու
անգամ աւելի ընդարձակ հողի վրա:

Հողերի պակասելով, և ազգայնակու-
թեան թւի աւելանալով՝ եւրօպական գիւ-

ղացին ստիպվեց տեղ-տեղ նոյն իսկ թող-
նել հողագործութիւնը և զբաղվել անաս-
նապահութեամբ, խաշնարածութեամբ, մե-
ղուաբուծութեամբ, վերջապէս տնայնագոր-
ծութեան այլ և այլ տեսակներով: Եւրօ-
պական գիւղացին շատ քիչ հող ունի և
եթէ գիտուն երկրագործների և իմաստուն
առաջնորդների ձեռքով չը ղեկավարվէր, ե-
թէ նրանց գործնական ցուցմունքները չըն-
դունէր, — պէտք է սոված մնար, կամ պէտք
է անդադար գաղթէր իր երկրից: Եվ ինչ-
րացի գիւղացին շատ աննշան և մինչև
անգամ մեծ մասամբ անպտուղ հողեր
ունի, բայց նա գիտէ յարմարվել, գիտէ
բարձրել, գիտէ հրաշալի կերպով պարար-
տացնել իր հողի փոքրիկ կտորը, գիտէ
նրանից այնքան օգուտ քաղել, որքան մեր
գիւղացին իր տան անգամ աւելի ընդար-
ձակ հողից չէ օգտվում: Այնտեղ գիւղա-
ցուն առաջնորդում էր ուսումը, գիտու-
թիւնը, այնտեղ ղեկավարում էր նրան սո-
կուն, անընդհատ աշխատասիրութեան և
առաջադիմութեան ոգին, — իսկ մեզ մօտ
տգէտ գիւղացին չունի հասկացող առաջ-
նորդներ, որոնք նրան ղեկավարէին:

Ազգայնականութեան թիւը հետզհետէ
բազմանում է, իսկ հողերը նոյն քանակու-
թեամբ են մնում... Եւ ահա, գիւղացին,
որը դարեւոր ի վեր սովոր էր ընդարձակ,
անհոգ, անփոք հողագործութեան ձեւին,
չը գիտէ այժմ, երբ հողերը պակասել են,
սահմանափակել իր ոյժերը, կենտրոնա-
ցնել իր աշխատանքը հողի աւելի փոքր
տարածութեան վրա, փոխելով իր հողա-
գործութեան ձեւը, ցորենի տեղ մի այլ օգ-
տաւետ հացաբոյս կամ բանջար ցանելով:

ընդարձակ հողագործութեան տեղ այդե-
նործութեամբ պարսպելով, հողագործու-
թեան տեղ, կամ հողագործութեան հետ
միասին այլ և այլ լրացուցիչ շահաւետ
պարագմունքներով զբաղվելով՝ ինչպէս մե-
ղուաբուծութիւնը, թռչնապահութիւնը,
տնային այլ և այլ արհեստները և այլն, —
և միմիայն շարունակում է անդադար ա-
ղաղակել թէ հող չունի...

Եւ ահա ոչինչ ելք չը գտնելով իր
գործիւնից, քանի որ հմուտ և գործնա-
կանապէս ուսում առած, մասնագէտ ա-
ռաջնորդներ չունի, գիւղացին սկսում
է յափշտակվել անիրագործելի ցնորքե-
րով: Նա մտածում է կամ ուրիշ
տեղ գաղթելու մասին, կամ երեւակայում
է որ եթէ հայ-լուսաւորական չը լինէր,
այլ որ և է ուրիշ կրօն ընդունէր, կրօնա-
փոխութեան դիմէր, — այն ժամանակ համ
փող, համ հող կը ստանար, ամենին չը
մտածելով որ հող հնարել չէ կարելի,
քանի որ յայտնի է, որ մեր ամբողջ երկ-
րում այլ ևս աւելորդ, ազատ հողեր չը
կան...

Բայց ո՞վ է մեղաւոր, որ այդ տեսակ
տխրալի թիւերիմացութիւններ են մտնում
մեր գիւղական տգէտ շրջանը. նախ մեղա-
ւոր է հոգեւորականութիւնը, որը չէ
կարողացել բացատրել գիւղացուն, որ
կրօնը, հաւատը մարդու անձնական, բա-
րօյական համոզմունք լինելով՝ ոչինչ կապ
չէ կարող ունենալ և չը պէտք է ունենայ
երկրային շահերի հետ, և ապա մեղաւոր
են և մեր հմուտ, բարձրագոյն ուսում
ստացած երկրագործները, որոնք խմբվելով
միմիայն մեծ քաղաքներում, իրանց արժա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզից գրած իմ թղթակցութիւններում ես
աշխատեցի ծանօթացնել ընթերցողին ցուցահան-
դէսի հետ և այդ ցուցահանդէսի ժամանակ տեղի
ունեցած մի քանի կօնգրէսների հետ: Իմ թղթ-
թակցութիւններում ես աշխատեցի նկարագրել
Պարիզի այժման կենտրոն ընթերցող երևոյթները,
բայց իմ անձնական տպաւորութիւնները տեղ
չը գտան յիշեալ թղթակցութիւնների մէջ: Այժմ
Թիֆլիս վերադարձած ես կուզենայի հաղորդել
«Մշակ» ընթերցողներին Պարիզի մասին իմ
անձնական տպաւորութիւնները: Այդ տպաւորու-
թիւնների մէջ ես կաշխատեմ խօսել Պարիզի փո-
ղոցային կենտրոն մասին, ազգայնականութեան, զօրքի
և ֆրանսիացու բնակչութեան մասին, քաղաքա-
կան երևոյթների վերաբերմամբ հասարակաց կար-
ծելի մասին, Պարիզի կլանող կենտրոնականու-
թեան մասին, ֆրանսիացի կանանց դրութեան
մասին, իմ մասնաւոր ծանօթութիւնների մասին:
Ֆրանսիացիներին, օտարազգիներին և հայ կօնգրէսի
հետ, Պարիզի մատուլի մասին և այլն...

Սկսում եմ Պարիզի փողոցային կենտրոնի նկա-
րագրութիւնից:

ՊԱՐԻԶԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հինգ ժամին առաւօտեան Պարիզը զարթնում
է փոքր առ փոքր սկսում են բացվել նախ ու-
տեղեղների խանութները, ապա կաֆէները և
վերջապէս ուրիշ խանութները: Իւրաքանչիւր փո-
ղոցով անցնել է երկու անգամ ձիերով լծած
մի մեծ սայլ, որի ձիավարը իւրաքանչիւր տան
առջև կանգ առնելով, անդադար հնչեցնում է իր
ձեռնի բռնած մեծ զանգակը: Ամբողջապէս դուրս
են գալիս տանից ծառաներ կամ աղաւթներ, ո-
րոնք արկղիկներով աղբ և աման տեսակ մնացորդ-
ներ դուրս բերելով, ածում են սայլի մէջ և սա-
լապանը զանգահարելով՝ շարունակում է իր ճա-
նապարհը, կանգ առնելով իւրաքանչիւր տան
դռան առջև: Այդ ժամանակ փողոցները արդէն
աւելում են թէ ձեռքի աւելներով և թէ մեքենա-
յին յարմարեցրած մեծ աւելով, որին մի ձի է

լծած: Աղբը և թողը այսպիսով հաւաքվում են
փողոցի երկու կողմը, արօտուարների մօտ անց-
նող առուակների երկայնութեամբ... Ամբողջապէս
առատ ջրեր են բաց թողնվում, արօտուարները
և փողոցները ջրվում, լուսավում են, ջուրը լըց-
նում է առուակները և իր արագ հոսանքով տա-
նում է բոլոր անմաքրութիւնները:

Այն ժամին կաֆէները, լրագիր ծախող կի-
օսկները, օմիլեթուսները գրասենյակները և
ուտեղեղների ու հացի խանութները արդէն
բաց են: Բնակչութիւնը սկսում են արդէն շտապ
շտապ անց ու դարձ անել փողոցներով... Մարդ
թէ կին մի ձեռքով պաշարեղէններով՝ հացով,
մսով, բանջարներով լի զամբիւղը բռնելով, —
միւս ձեռքով լրագիր են բռնում և արօտուարով
շտապով անցնելով՝ ազահոսութեամբ կարդում են
օրվայ նորութիւնները: Փողոցի միջև մեծը, բո-
լորն էլ հացի հետ միաժամանակ առնում են
անպատճառ և լրագիր... Պարիզի բնակչի հա-
մար լրագիրը նոյնքան անհրաժեշտ բան է, որ-
քան և հացը: Ահա փոքր առ փոքր սկսում են
երևալ օմիլեթուսները, ձիաքաշ երկամետրու վա-
գօնները և ֆիակները: Զիւլաւները և կօնյուկ-
տօրները՝ նստողներին սպասելով՝ բոլորն էլ 5
թէ 10 սանտիմ վճարելով, առաւօտեան այս կամ
այն լրագիր են առել և կարդում են...

Ահա երեսը մի տարօրինակ օմիլեթուս. դա
փոստային օմիլեթուսն է: Նա լի է իրանց համա-
զգեստը հազած նամակաբերներով, որոնք Պարի-
զի կենտրոնական փոստից նամակներն ու լրա-
գիրները ստանալով՝ տանում են յանձնելու և ուս-
տային թաղական բաժնիներին: Ամեն բոլոր օմ-
իլեթուսը կանգնում է և նրա միջից իջնում է մի
մի նամակաբեր, որը ուղևորվում է գէպի փոս-
տային թաղական բաժնի:

Փողոցները հետզհետէ կենդանութիւն են ստա-
նում. կանանց ու մարդկանց ձեռքով մղվող ան-
թիւ անհամար փողոցի սայլեր, լի այլ և այլ
մրգերով, բանջարեղէններով և ծաղիկներով, լըց-
նում են բոլոր փողոցները, օգի մէջ անուշ հոտեր
տարածելով: Ծախողների աղաղակները միախառն-
վում են կառքերի անիւների և ձիավարների

մտրակի ձայնի հետ... Ինն ժամին արդէն փո-
ղոցային երթևեկութիւնը այն աստիճան մեծ է
դառնում, որ ձիաքաշ երկամետրու վագօնները,
օմիլեթուսները, այլ և այլ ապրանքներով բեռն-
ված սայլերը, մասնաւոր շնորհալի կառքերը և
ֆիակները՝ միմեանց չփնջում են, քիչ է մնում
միմեանց ընդհարվելն, այն աստիճան իրար մօտ
են անցնում կառքերի անիւները... Եւ այդ բո-
լոր կառքերի մէջտեղ կարողանում են անասնի
արագութեամբ անց ու դարձ անել բազմաթիւ
վերջապէսները: Փողոցի մի արօտուարից դէպի
միւս արօտուարն անցնելու համար հետեւիները
ստիպված են շատ անգամ մի քանի րօպէներ
սպասել...

Մինչև կէս օրը երթևեկութիւնը փողոցներում,
մասնաւոր զլխաւոր փողոցներում, բուլվարնե-
րում, կամուրջների վրա և ցուցահանդէսի շուրջը
այն աստիճան մեծ է դառնում, որ ամեն րօպէ
շարժումը ընդմիջվում է... Գնակարծ փողոցի
մէջտեղ կանգնած ոտակներ ձեռք է բարձրաց-
նում, անմիջապէս ձեռք է բարձրացնում և ուս-
տիկանին ամենամօտ եղած կառքի կառապանը:
Ապա հետզհետէ ձեռք են բարձրացնում շարքով
ետեւից եկող բոլոր կառքերի ձիավարները, — և
ահա ամբողջ փողոցի երթևեկութիւնը կանգ է
առնում, շարժումը մի քանի րօպէով ընդմիջվում
է, մինչև որ փողոցի ծայրում տեղը կրկին ա-
ղաղակվում է և նորից սովորական շարժումը բնա-
կում է...

Տարածութիւնները Պարիզում անհամար են,
շատ սովորական բան է գործով քննարկ մարդու
համար ֆիակով կէս ժամ, երեք քառորդ ժամ,
նոյն իսկ մի ժամ գործ դնել ուղած տեղը հասնելու
համար: Այդ է պատճառը որ ֆիակով քննարկ-
ները, ժամանակից օգտվելու համար, մեծ մասամբ
ֆիակովում նստած ժամանակ են կարդում թէ
լրագիրները, թէ փոստից ստացված նամակներն
ու գործնական թղթերը...

Բացի ձիաքաշ երկամետրու բազմաթիւ վագօն-
ներից, անթիւ օմիլեթուսներից ու բազմաթիւ սե-
փական կառքերից, ֆիակների քանակութիւնն
էլ այնքան մեծ է Պարիզում, որ ֆիակը վարձն

լու ժամանակ շատ յաճախ է պատահում ձեղ
տեսնել նրա լապտերի վրա՝ ուժ, ինն կամ տա-
սըն հազար թիւը...

Պարիզի փողոցային երթևեկութեան առանձ-
նայատկութիւնը կաղմում են այն բազմաթիւ
կառքերն ու սայլերը, որոնք փողոցներում անց
ու դարձ են անում, ծառայելով այլ և այլ առե-
տրական ֆիրմաներին, լրագիրների խմբագրու-
թիւններին, ցիկլերին, ֆաբրիկաներին, մագա-
զիններին՝ որպէս շարժական յայտարարութիւն-
ներ... Շատ անգամ այդ տեսակ կառքերի դրսի
պատերը պատկերազարդ են լինում, անցնողների
աւելի մեծ ուշադրութիւնը գրաւելու համար:

Պարիզի փողոցային հրէշաւոր շարժումը և եր-
թևեկութիւնը իր գազաթնակէտին հասնում է ե-
րեկոյեան... Գլխաւոր փողոցները, բուլվարնե-
րը, մասնաւոր Շանս-Էլիզէ ընդարձակ և հրաշա-
լի փողոցը, որոնք բոլորն էլ ծածկված են կամ
ասֆալտով, կամ փայտեղափայտով, և որոնք փա-
ռաւոր կերպով լուսաւորված են գաղով և էլէկտ-
րականութեամբ, — այն աստիճան լցվում են ա-
մեն տեսակ կառքերով, որ ձիերը կարողանալ
են միայն քայլ առ քայլ առաջ ընթանալ և
կառքերի անիւները կատարելապէս դիպչում են
իրար... Իսկ նոյն փողոցների երկու կողմ գտն-
ված անթիւ անհամար կաֆէները և նրանց առ-
ջև գտնված արօտուարները բռնված են հազա-
րաւոր այցելուներով, որոնք նստած փողոցի սե-
ղանների շուրջ կողմ, և լրագիրները կարդալով
վայելում են կաֆէ, դարեւոր և զանազան դովա-
ցուցիչ խմիչքներ... Հրէշ քաղաքը բոլոր փողոց-
ներում այդ ժամանակ տրորում է մի անընդհատ,
թէն խուլ աղմուկ, որը ընդմիջվում է լրագիրներ
և ամեն տեսակ իրեր ծախողների սուր աղաղակ-
ներով... մէկը երեկոյեան հրատարակված լրա-
գիրների համարներն է ծախում, միւսը ցուցա-
հանդիսի պլանը կամ ուղեցոյցն է առաջար-
կում, երրորդը նոր և տարօրինակ ձևի զլխարկ-
ներն է վաճառում, չորրորդը վերջին ձիաքալի
կամ վիճակախաղի ցուցակն է ուղղում սաղաքներ,
հինգերորդը մանկական խաղալիքներն է ծա-
խում, և այլն և այլն... Անասելի աղմուկ,

նաւորութիւնից ստոր բան են համարում գնալ ապրել զիւղում, անդադար չփոխել զիւղական ազգաբնակչութեան հետ և առաջնորդել նրան իր կեանքի մէջ, զեկաւարելով զիւղացու աշխատանքը և մատնացոյց անելով նրան թէ հետզհետէ ժամանակի պահանջման համեմատ երբ և ինչ ձևի հողազորութիւն պէտք է ընդունել, հարկաւոր զէպքում զիւղական աշխատանքի ո՞ր ձևը ինչ ձևով պէտք է փոխարինել:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դիմում ենք «Մշակի» բաժանորդներին, յիշեցնելով նրանց, որ բարեհաճան վճարել իրանց վրա ապագայի մնացած «Մշակի» բաժանորդավճարը:

ԶԱՔԱՐԱՒԻՑ մեզ գրում են, որ այդտեղի փոքրիկ հրապարակում այս րօպէիս մեծ քանակութեամբ սեխ, ձմերուկ և այլ զանազան պտուղներ են ծախվում շատ էժան գներով. ժողովուրդը առնում է և հիւանդանում Այդ հանգամանքից, ասում է թղթակիցը, օգտւում է միմիային զեղատուր, որը այդ շուք ժամանակ մրդերից հիւանդացողներին պատճառով աշոյ առուտուր ունի:

ԶԱՆԳԵՁՈՒԹԻՑ մեզ գրում են. «1840 թ. երկրաշարժի ժամանակ, երբ կործանվեց Արարատեան նահանգի Ալեքի գիւղը, այստեղի Քարահունջ գիւղը ստացաւ դեռեւի երկու պատուածներ, որոնցից մէկը ընկած է այժմ գիւղի շինութիւնները միմիային, իսկ միւսը—գիւղին չըջապատող այգիների միջով: Ինչպէս պատմում են գիւղի անկախ տնային մարդիկ, պատմվելով ժամանակ այդ պատուածներից հրաբուխի պէս հողախառն ձուլակալ քարեր և հողի կտորներ են բարձրացել երկրի երեսը, իսկ տեղ-տեղ էլ երկրից ցածացել է: Բայց անցեալ մի քանի տարի պատուածները անհետանում են առանց մի որ և իցէ չարագուշակ հետեանքների իսկ վերջին:

Բազմամասնակ ձայներ ու գոռում գոչումներ, փողոցների քարայտակի կամ ասֆալտի վրա անընդհատաբար զրոյով հազարաւոր անիւների խուլ ձայնը,—այդ բոլորը միասնականում է և վերջի վերջոյ հասնում է մի այնպիսի խաղաղօցի միակերպութեան, որ այդ տեսակ տենդային կեանքին, հրէշաւոր երթևեկութեան ու զուլում պատեցնող շարժման անսովոր մարդը անկարգաբերել յօգնածութիւն է սկսում զգալ... Մարդը շտապում է տուն, հանգստանալու համար, և վերադառնում է իր սենեակը զլիսացաւով և զլիս պտույտներով...:

Այդ տեսակ տենդային շարժումը շարունակվում է ամբողջ գիշերը, փոքր ինչ հանդարտվում է միայն լուսաղէմին,—իսկ միւս առաւօտը նորից սկսվում է նախընթաց օրվայ սովորական հրէշաւոր երթևեկութիւնը, տենդային, աղմկալի շարժումը:

ԱԶԳԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, ԶՕՐԲԸ ԵՒ ՖԻՆԱՆՍԱՅՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Պարիզում իմ մի ամսվայ կացութեան ժամանակ ես առիթ ունեցայ ոչ թէ միայն պատել փողոցներում և ցուցահանդիսում, ինչպէս առիթ ունեն Պարիզի ցուցահանդիսն այցելողները, բայց և բացառապէս միջոց ունեցայ այդ կարճ ժամանակամիջոցում մասնաւոր ծանօթութիւններ կապել ներկայ դանիկ ալ և այլ ժողովներում, մասնակցել մի քանի փառաւոր ճաշկերոյթներին, այցելել մի քանի կոնցերտային և թատրոնական դահլիճները, հրաւիրված լինել խնձողներին և երեկոյթներին, ինչպէս օրինակ զանազան գրական շրջաններում, պրեֆէկտի բնակարանում և քաղաքային վարչութեան փառաւոր տան մէջ և այլն: Այդպիսով չփութով ազգաբնակչութեան դրեթէ բոլոր դասակարգերի հետ, ես կարողացայ բաւական որոշ գաղափար կազմել Պարիզի երկու սեռի բնակիչների տիպի և բնաստրութեան մասին: Ընդհանրապէս կարելի է ասել, որ Պարիզի բնակիչների տիպը բաւական տեղի է. երեք միլիոն ազգաբնակչութեան մէջ հազիւ կը հանդիպէ ճշմարիտ գեղեցիկ կանանց, կամ լաւ կազմված, յաղթանալով, բարձրաստակ, առողջ տղամարդկանց:

Ժամանակներս վերոյիշեալ պատուածները կըրկին սկսեցին երևալ, այն էլ ամառային ամիսներում: Առաջին անգամ, երբ երեքշաբթի, շատ փոքր էին, բայց այժմ զգալի կերպով օրից օր երկարում են, արեւիքից զէպի արեւմուտը, և լայնանում: Լայնութիւնը հասնում է մինչև 5 վերջօրի, անդ-տեղ դեռ գերազանցում է: Սոյն թիւի յուլիսի 20-ին գիւղացիները յայտնել են այդ մասին պ. զաւառապետին. զաւառապետը եկաւ անձամբ հետազոտեց այդ բանը, և յայտնեց, որ երկրիւղալի է, մասնաւոր որ գիւղի դիրքը հարթ չէ, այլ աստիճանաւոր է բարձրանում: Այդ մասին զաւառապետը յայտնել է Գանձակի նահանգապետին, որպէս զի թոյլաւորութիւն ստանալ այդ երկրիւղալի տեղակայրի 30 տուն բնակիչներին տեղափոխելու մի ալ աւելի յարմարաւոր տեղ, գիւղի մօտ: Ահա անցնում է և օգոստոս ամիսը, բայց այդ խնդիրը դեռ չէ լուծված և գիւղացիք ահ ու սարսափի մէջ են, քանի որ 3 տուն փլած է, իսկ մի քանիսն էլ ճաքճաք տված:

Լօնդոնի «Daily News» լրագիրը այն միտքն է յայտնում, որ անգլիական կառավարութիւնը պէտք է դադարեցնի այն հարկի հատուցանելը, որը վճարվում է թիւրքաց սուլթանին Ալպորտ կղզու համար, եթէ Բ. Դուռը անպայալ չի մղտցնի հայկական նահանգներում այն ընթերցանները, որոնք անհրաժեշտ են քրիստոնեայ ազգաբնակչութեան կեանքի և դոյքի ապահովութեան համար:

Գիւղական վարչութեան վերաբերեալ օրէնքները տեղական զիւղական ազգաբնակչութեան աւելի մատչելի դարձնելու համար, արդէն որոշված է հայերէն և վրացերէն լեզուով թարգմանել գիւղական վարչութեան կանոնադրութիւնը: Թարգմանութիւնը արդէն սկսված է:

Այս օրերս մեր խմբագրատուն մտան մի երկու գէյթոնցի հայեր, որոնք հեռու կիլիկիայից կոպկաս եկած՝ դրամական օգնութիւն են խնդրում: Նրանք իրանց ձեռքում ունեն խաբբերդի առաջնորդի և Զէյթունի եպիսկոպոսից տուած

Ամբոյսի տիպը ընդհանրապէս տեղի է Պարիզում, մարդիկ և կանայք ցածրահասակ են, մաշված, տարիքից առաջ պառաւած դէմքերով... Ազգաբնակչութիւնը այնպիսի սպաւորութիւն է գործում անկողնամալից դուրսի վրա, որ Ֆրանսիայի մայրաքաղաքի ազգաբնակչութեան ցեղը կարծես թէ այլասեռվել է: Անկարելի է համեմատել Պարիզի ազգաբնակչութեան տիպը, օրինակ Վիեննայի բնակիչների տիպի հետ. այդ վերջին քաղաքում, զրեթէ առանց բացառութեան, բոլոր կանայք և տղամարդիկ բարձրահասակ, լաւ կազմված, յաղթանալով, թարմ, առողջ և գեղեցիկ են: Վիեննայի կանայք մասնաւոր հրաշալի գեղեցկութիւններ են, ամբողջ ստոր դասակարգի կանանցից սկսած, մինչև արքայական տիպի կանայք: Իսկ պարիզական ընդհանրապէս տեղի, թուլակալ, մաշված, նիհար, դեղնած է,—բայց գիտէ լաւ հագնվել, գիտէ գրաւել լինել, աչքի է ընկնում փողոցում իր շնորհալի քայլաձեւով... Պարիզում դէմքի թարմութիւնը էլ արեւոտական է: Գուցէ ոչ մի տեղ կանայք այնքան չեն գործածում սնունդ ու ներկ, որքան Պարիզում. Ֆրանսիական թուլերը միշտ սնդուրված են, շրթունքները կարմիր ներկված, մազերը, յոնքերը, թերթեւները նմանապէս պատշաճաւոր գոյներով ներկված:

Շատ կարելի է որ Պարիզի բնակիչներին ֆիզիոլոգիապէս այլասեռվելու երեւոյթը դրանով է բացատրվում, որ Ֆրանսիական ցեղը չէ խառնվում մի որ և է այլ ցեղի հետ. Ֆրանսիացիք անդադար այլասեռվում են. և Ֆրանսիայի ազգաբնակչութեան թիւը, ինչպէս յայտնի է, մինչև անգամ չէ աճում, այլ նուազում, պակասում է: Այն ինչ Վիեննայի ազգաբնակչութիւնը ներկայացնում է մեզ մի բաղադրեալ խառնուրդ այլ և այլ առողջ և թարմ ցեղերի: Վիեննայի ազգաբնակչութեան տիպը մի խառնուրդ է՝ գերմանական, սլավոնական, ունգարական, բուլղարական, իտալական, հրէայ ցեղերի, և այդ է գուցէ պատճառը, որ Վիեննայի երկու սեռի բնակիչների տիպը այդքան առողջակալով և գեղեցիկ է: Ֆրանսիացու թուլակալում և թուլամորթ լինելը

թղթեր, որոնցով այդ հոգևորականները խնդրում են բարի մարդկանց՝ օգնել այն գէյթոնցիներին, որոնց ամբողջ հարստութիւնը կրակի գոհ դարձած լինելով, իրանք կարօտ են օգնութեան:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի Նորքաղաքամասում տարածված հիւանդութեան դէմ արդէն տեղիս կառավարութիւնը սկսել է խիստ միջոցներ ձեռք առնել: Նորքցիներին հեռացրել են իրանց այգիները, իսկ տները մաքրվում, այլ և այլ զեղերով են սրկվում: Աստուածածնի աստիճանները արդէն արդարեւ էր Նորք գնալը»:

Մեմ գրում են օգոստոսի 18-ից, որ չը նայելով թէ օգոստոսի 20-ը մօտենում է, բայց և այնպէս շրջերը երևանում սաստկանում են: Ստուգելով այժմ տաքութեան 22 աստիճան է անում (ըստ Բէօմբերի):

Երևանցիներից շատերը, ինչպէս մեզ հաղորդում են, արդէն պատրաստութիւններ են տեսնում իրանց արդիւնաբերութիւններով և բերքերով մասնակցելու կոպկասեան անդրանիկ ցուցահանդիսին:

Ջանադան տեղերից միշտ գանգատներ են ուղարկում մեզ, որ հայոց դպրոցների դրադարանները ընդհանրապէս շատ անախաճնելի կերպով են պահվում: Նոյն իսկ զաւառական մեծ դպրոցների դրադարանները ենթակա են գանգատների համար ձեռքերի թալանումներին: Գրադարաններ ունենալը մի այնպիսի կարևոր պահանջ է դպրոցների համար, որ չենք կարող մատնանել չանել այդ տեղը երկու թիւ վրա, դրա հետ միասին հրաւիրելով հայոց դպրոցներում ծառայողներին, որ նրանք առանձին կերպով փայտային դրադարանները հարստացնելու գործը իրենց մարդիկ համոզված լինեն, որ իրանց նուիրած գրքերը չեն կորչի և մասնաւոր մարդկանց սեփականութիւն չեն դառնալ, այն ժամանակ, հաւատացնում ենք, շատ շատերը նոյն իսկ միայն գրքեր նուիրելով կարող կը լինեն հարստացնել շատ դրադարաններ: Նուիրել ցանկացողներ շատ կան, բայց այն կասկածը, թէ նուէրը իր նպատակին չի հասնի, և նուիրած գրքերը կը կորչեն

պարզ երևում է, մասնաւոր, Ֆրանսիական դպրոցի վրա. Ֆրանսիական սուլթանը փոքրահասակ, թուլակալ է, ման է գալիս գիւղեր ցած ցած: Տխուր տպաւորութիւն են գործում հանդիսականի վրա Ֆրանսիական դպրոցի զինավարժութիւնները: Զօրքը երևում է դիսցիպլինայից զուրկ, անդադար տեսնում էք երեկոյեան ժամանակ սուլթաններին կանանց հետ քէֆ անելիս. հանրապետութեան նախագահի պալատի, կամ ներքին գործերի մինիստրութեան տան առջև կանգնած պահապանը, անհոգ և անշնորհ կերպով հրացանը ձեռքին բռնելով, անդադար աչքով է անում փողոցով անցնող ազախներին. սուլթանը օֆիցերի հետ փողոցում հանդիպելիս և նրա հետ խօսելիս սիգար է ծխում...:

Մեր կառավարութիւնը ինքն չը գիտէ ինչ է անում, ասում էր ինձ մի երկար խօսակցութեան ժամանակ Ֆրանսիացի մի յայտնի պետական մարդ. մինչև այժմ դպրոցի վրա տարեկան 800 միլիոն ֆրանկ ծախսելով, հանրապետական կառավարութիւնը աղաքակալ էր թէ պատրաստ ու կազմ ունի օրինակելի զօրք... իսկ հիմա յայտնվեց, որ զօրքը անպէտք է, քանի որ պահանջվեց նորից տակն ու վրա անել զօրքի ամբողջ կազմակերպութիւնը, վերանորոգել, վերակազմել նոյն զօրքը: Եւ ահա մենք այժմ ունենք թուլ անելի մեծ, բայց աւելի փոքր ժամանակաւ միջոց ծառայող սուլթաններից բաղկացած մի զօրք: Այդ տեսակ զօրքի իւրաքանչիւր անդամը, աւելացրեց խօսակցիցս, կարող է այս, լաւ քաղաքացի համարվել, բայց չէ կարող համարվել լաւ զինուոր, քանի որ սովոր չէ զինուորական վարժութիւններին և անընդունակ է տանել պատերազմի կամ չուր Գժուարութիւններն ու ծանրութիւնները:

Գուցէ պատերազմի դէպքում Ֆրանսիական զօրքը իր թշնամու վրա յաղթող էլ կը հանդիսանայ, ճակատամարտերի ժամանակ իւրաքանչիւր զինուոր հերոսութեան հրաշքներ կը գործէ, այդ ես չը գիտեմ. այդ հարցի վճռելը ապագային է պատկանում: Բայց ես խօսում եմ իմ տեսած ու լսածի մասին: Եւ իրաւ, Ֆրանսիացու բնաստրութիւնը մի տարօրինակ բնաստրութիւն է.

կամ կը գողացվեն,—ամենքին յետ է կանգնեցնում նուէրներ անելուց:

Օգոստոսի 30-ից Թիֆլիսի թատրոնում կը սկսվեն օպերային ներկայացումները: Լուսմ ենք որ Թիֆլիսում այս տարի կը լինեն և դրամատիական ներկայացումներ, եթէ չը հաշտենք և այն, որ մտադրութիւն կայ և բալէտային ներկայացումներ տալու բանիկ թատրոնում: Նոյն թատրոնում լինելու են և վրացերէն ներկայացումներ: Այդ բոլորից յետոյ, ինքն ըստ ինքեան հարց է առաջ գալիս. ինչ եղաւ սեպտեմբերից մշտական հայոց խումբ ունենալու խնդիրը...:

ԲԱՎՈՒՆԻՑ մեզ գրում են. «Սաղիանի վանքի օգտին հանգանակութիւնը անպակաս է այս կողմերում. հանգանակողն է վանահայր Ս. քահանայ Գրիգորեանց, որ 1887-ին մի քանի ամիս շրջագայելով Անդրկասպեան երկրում, բաւական փող է հաւաքել: Նոյն քահանան սրանից մի աւելի առաջ քննութեան համար շրջագայելով Բագու, Ղուբա և Դերբենդ, ի միջի այլոց, բաւական փող է ժողովել և յօգուտ Սաղիանի վանքի: Թէ որքան են տուել Ղուբան և Դերբենդը, չը գիտենք, բայց Բագուս այս անգամ էլ 500 ռուբլի տուել: Շատ հետաքրքրական է իմանալ թէ ովքեր են հսկում այդ հանգանակութեան վրա, և ինչպէս են գործադրում ժողովրդից հանգանակած փողերը»:

«Մշակի» 91 համարի բանասիրական բաժնում, առաջին սիւնակում մի սխալ է սպրովել, տպված է «այլ և առանց միւս ղեղինքեցիական միջոցների նրա լոկ գործածութիւնը ապարդիւն է խաբուսիկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԻՑ ԵՄԷԻ ԶԱՆԱՊԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Իրանի միապետը արդէն վերադառնում է իր եւրօպական ճանապարհորդութիւնից, և ինչպէս հե-

Ֆրանսիական ազգը իսկապէս մի հանելուկ է: Իդէալիստ, տաղանդաւոր, գեղարուեստագէտ, նոյն իսկ հանճարեղ ժողովուրդ,—իւրաքանչիւր Ֆրանսիացին ջոկ վերցրած՝ մի տեսակ անպահանջ երեւոյթ է, շուտ բռնկող, անզուսպ, ֆրագոր, րօպէի ազդեցութեան տակ գործող, րօպէի մարդ է... Իր պատմութեան ընթացքում ֆրանսիական ազգը ամենամեծ դադախներ է յայտնել, ամենամեծ գործեր է կատարել, անձուիրաբար իր արեւն է թափել ուրիշ ազգերի ազատութեան համար. Ֆրանսիան էր, որ գնեցաւ Լաֆայետի առաջնորդութեամբ զօրք եւրօպարկի Ամերիկա: Անգլիայի լուծից ազատելու համար, Ֆրանսիան էր, որ մտցրել է քաղաքակրթութեան լոյսի առաջին ճառագայթները Եգիպտոսում, Ֆրանսիան էր, որ իր արեւնով օգնել է Իտալիային Աստուրիայի լուծից ազատելու, Ֆրանսիան էր որ շնորհ է սահմանադրութիւնը Լիբանանին,—իսկ այժմ նոյն Ֆրանսիան զգոյշ, նոյն իսկ վախկոտ է դարձել: միմիայն մի գաղափար, մի նպատակ աչքի առջև ունենալով, այն է Ելլաօի և Լօթարինգիայի կորցրած նահանգները իրան վերադարձնելը...:

Ֆրանսիային յաճախ է փոփոխում իր տրամադրութիւնը, թէ և գուցէ ամեն անգամ անկողն է իր րօպէական տրամադրութեան մէջ: Գրական կոնգրէսի նիստերի ժամանակ Ֆրանսիացիք ցոյց տուեցին որքան դժուր են, որքան վախկոտ են նրանք մինչև անգամ կոնգրէսի նախափորձին նիստի ժամանակ, որին նախապահում էր յայտնի Ֆրանսիացի մի պարզող Ժիլ Կարբոնի, կոնգրէսի մի քանի անդամներ իրանց թող տուեցին մի քանի անտիղի քաղաքական ակնարկութիւններ անել իրանց գեկուցումների մէջ: Եւ ահա նախագահը կանգնեցնում է ընթերցանութիւնը, յանդիմանելով զեկուցանողներին: որ մեղանչեցին հիւրասիրութեան դէմ, մեղանչեցին մի քանի պետութիւնների բարեկամական զգացմունքները: Այդ նկատուածութիւնը առաջ է բերում ժողովում անստելի աղմուկ, իրարացում և նոյն իսկ սկանդալ... Նախագահի նկատողութիւնը այն աստիճան չափազանցութիւն է երեւում նոյն իսկ կառավարութեան ներկայացու-

ուղիքը արդէն լուր բերեց, այս օրերս Աստուծոյ յիշատակը է առաջ անհամարձակ Մի քանի օրից յետոյ Նասր-է-Էլ-Դին Դաւիթ անցնելով Վաղարշապատ, կը գայ Քիֆլիս, և այստեղից, ինչպէս լսուած ենք, Նրանի վրայով—եթէ ոչ Բագրատի— կը վերադառնայ իր երկիրը՝ հինաւուրց Պարսկաստանը։

Իրանի այսօրվան միասնական գլխաւորը մի քանի անգամ է արդէն, որ գնում է Եւրոպա տեսնելու, և այժմ է երթալով, որ այդ ճանապարհորդութիւնը, իր բոլոր զուարճութիւնները և իր ուրախութիւնները հետ միասին, շատ փոփոխութիւններ է մտցրել իրանի միապետի հայեացքները և մտքերը մէջ։ Դժուար Պարսկաստանում, ապրել Պարսկաստանում, կրթվել և զարգանալ Պարսկաստանի մթնոլորտում, և ապա ձգտել տեսնել քաղաքակրթ երկրները,—առ արդէն ապացոյց է, որ Եւրոպան իր կեանքի բոլոր կողմերով մի յայտնի աստիճանի՝ ապագութիւն է թողնում Նասր-է-Էլ-Դին Դաւիթի վրայ։

Դաւիթ թէ իր առաջին և թէ իր վերջին ճանապարհորդութեան ժամանակ գրել է յիշատակարաններ, հետաքրքրական է ծանօթանալ այդ յիշատակարաններին հետ, որոնցից և կարելի է եզրակացնել, թէ ինչպէս է ըմբռնել իրանի միապետը եւրոպական կեանքը և եւրոպական քաղաքակրթութիւնը, և անկասկած այդ աւելի հետաքրքրական է, քան այն քաղաքական հարցերը, որոնք կարող էին յարուցւած լինել Դաւիթ Եւրոպա գնացած ժամանակ։

Իրան մի նուազ Դաւիթ կարծիքները մենք առաջ կը բերենք «Times» լրագրի Պարիզի թղթակցի հաղորդած տեղեկութիւնները այն մասին, թէ ինչ կարծիք է յայտնել Դաւիթ Անգլիայի և Ֆրանսիայի մասին Թէ ճշմարիտ այդ խօսքերը Պարսից Դաւիթ խօսքերն են, թէ մեծ մասամբ անգլիական լրագրի թղթակցի համեմատ, այդ մենք ասել չենք կարող. մենք միայն առաջ կը բերենք այն, ինչ որ մեծ հետաքրքրութեամբ հաղորդեցին համարեալ բոլոր եւրոպական լրագրիները։

Խօսելով Անգլիայի մասին Թէ Դաւիթի զանազան ասել է. «Անգլիական ազգը, իր բոլոր արդիւնաւորական կողմերով, իր լուրջ և աշխատասէր ժողովրդով, իր քաղաքական ցոյցերով և դէպի օրէնքը ունեցած մեծ յարգանքով, ինչ երևում է իրեն մարդկային ամենազօրեղ մի ցեղը։ Անգլիա-

կան ամբողջ ամենաազգի ընկնող յատկութիւնը, —այդ նրա օյժն է։ Անգլիացիները նայում են ձեռք վրա հետաքրքրութեամբ, բայց նրանց հայեացքը մէջ էնեղրդիա կայ։ Կարծէք իւրաքանչիւրը նրանցից հարցնում է. «Ինչու է այդ պարտնայտեղ եկել, ինչու նրան այդպէս են ընդունում»։ Ես երբեք մի այդպիսի ժողովուրդ չեմ տեսել, որի իւրաքանչիւր անդամը իրան իր երկրի տէր կարծէր, ինչպէս այդ կարելի է տեսնել անգլիացիների մէջ, և մի բան, որ ինձ ամենից շատ զարմացրեց, այդ այն է, որ այդպիսի հայեացքի հետ միասին դուք նկատում էք կատարեալ յարգանք դէպի օրէնքը։ Իմ աչքի առաջ ամբողջ անպայման հնազանդութեամբ էր պոլիցիակա նի նշանին, և այդ բանը ինձ վրա խոր տպաւորութիւն ունեցաւ։ Երբ ես մտածում եմ, թէ ինչու Անգլիան այդպէս զօրեղ է, ինձ թվում է, որ նրա օյժն պատճառը այն է, որ նա հարեաններ չունի։ Երբ հարեանութիւն չը կայ յետ նայելու, այն ժամանակ կարելի է անհրկիւղ առաջ դնալ,—և Անգլիան իր տանը կատարեալ տէր է։

Այսպէս զանազան խօսելու Ֆրանսիայի մասին, Դաւիթ ասել է հետեւեալը. «Ֆրանսիացիները և անգլիացիները մարդու վրա էլ տարբեր կերպով են նայում։ Ֆրանսիացիները նայում են ուրախ կերպով, չը հարցնելով թէ դուք ինչու էք եկել։ Նրանք բաւականութիւն են գտնում, տեսնելով այնպիսի մարդիկ, որոնք ուրիշ կերպ են հագնւած և ոչ միայն իրանց նման չեն։ Դա միշտ շարժում մի ազգ է։ Ոչ մի տեղ այդպիսի մեծ բազմութիւն չը հաւաքվեց ինձ վրա նայելու համար, ինչքան Ֆրանսիայում։ Ուր էլ գնայի, և ինչ ժամանակ էլ լինէր, միշտ ինձ ուղեկցում էր անազն բազմութիւն։ Այդ բանը առիթ է տալիս կարծելու, որ այդ երկիրը շատ հարուստ է։ Անգլիայում մի առաւել կայ. ժամանակը,—փող է։ Իսկ Ֆրանսիայից լաւ կանէին, եթէ անգլիական ժամանակը—առկաութիւն է։ Ես շատ անգամ հարցնում էի, թէ ինչպէս այդ արժանաւոր ազգը, որը այնպէս սիրալի կերպով ինձ ողջունում էր, կարող է այդքան ժամանակ կորցնել։ Մի խօսքով ամեն բանով Ֆրանսիան տարբեր է Անգլիայից։— օգով, երկնքով, տներով, կառքերով, այնտեղ ուրիշ տեսակի մարդիկ, և ուրիշ տեսակի կանաչ են։ Այդ տարբերութիւնը ինձ ապշեցնում էր։ Ես այն եզրակացութեան եկայ, կոսը չէ խրատութեամբ անվերջ շարունակում է իր ճառը... Յանկարծ սեղանի մի ծայրից վեր է թռչում մի երիտասարդ հիւր, և ընդամենը ճառախօսքին, բարձր ձայնով աղաղակում է. «Եթէ այդպէս է, եթէ դուք քաղաքականութեան վրա էք խօսում, ուրեմն ես էլ իրաւունք կունենամ իմ քաղաքական համոզմունքս յայտնելու... vive Boulanger...»

Այդ ժամանակ սեղանի միւս ծայրից արագ քայլերով մտնում է Բուլանժէի երկրպագուն մի այլ երիտասարդ և զգում է նրա առջև իր այցեւորները... Այդ նշանակում է թէ վաղը լինելու է ճգնաժամ։ Այդ էլ բաւական չէ, մի երրորդը իր այցեւորները զգում է մի չորրորդին,—ուրեմն մի երկրորդը դուռը... Երևակայեցէք ձեզ հրաւիրվածներ խառնաշփոթութիւնը... Անմիջապէս հետեւում է դաշինքով աննկարագրելի շփոթութիւն, իրարանցում... Բոլոր հիւրերը իրանց տեղերից վեր են թռչում, կանայք քիչ է մնում ուշաթափվել, Ժիւլ Միմոն դուռնաթափվում է, մինիստր Ֆլէմէր ուղւում է հեռանալ դաշինքից, բոլոր թողնում ենք մեր տեղերը և խմբում ենք Ժիւլ Միմոնի շուրջը. ծառաները իրանց օրբիչները ձեռքերին, շփոթված և բերանները բաց են մնում... —Այդպէս են Ֆրանսիացիք, ասում է ինձ իմ կողքին կանգնած աւստրիացի մի յայտնի գրող, կարծես թէ նրանց երանքներում ոչ թէ արիւն է վազում, այլ նրանք լին վառօղով կամ գինւաւորով... չը գիտեն նրանք զսպել իրանց կրքերը, րօպէական տրամադրութեան տակ ամեն բան մոռանում են, նոյն իսկ քաղաքակրթութեան տարրական սկզբունքները դէպի օտարները և դէպի կանայք...

Ընդհանուր խառնաշփոթութեան և աղմուկի մէջ ծերունի Ժիւլ Միմոնի հաղի հաջողութեամբ է բարձրացնել իր ձայնը և մի ճառ արտասանել... Վերջապէս դժուարին աղմուկը փոքր ինչ հանդարտութեամբ է և Ժիւլ Միմոն կարողանում է խօսել։ Ֆրանսիացիների մէջ անգլիական ժողովրդականութիւն ունեցող այդ մարդու ոգևորված ճառը հանգստացնում է յուզված կրքերը և նրա խօս-

քի ֆրանսիացիք ուժեղ, հարուստ, ուրախ և կեանքից լի են, և ինձ թվում է որ նրանք աւելի քիչ ուժեղ կը լինէին եթէ նրանց մէջ աւելի քիչ երկպառակութիւններ լինէին։ Նրանք ինձ բացատրեցին այդ երկպառակութիւնների պատճառը, բայց ես բոլորովին չը կարողացայ հասկանալ։ Ինձ թվում է, որ այդ բոլորը առաջ է գալիս նրանից, որ միմեանց չեն կամենում են թարկվել։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կրիտիկ շարունակում են դաղթել դէպի դաւանդան կողմեր. միմիայն Յունաստան կրիտացի գաղթականների թիւը 1,500-ի է հասնում։

—Ինչպէս գրում են Կրիտիկ, Եւրոպի փաշան թող չէ տուել, որ մասնատակները խնդրագիր ներկայացնեն Բ. Կրանը։

—Աւստրիական կիսապաշտօնական լրագրիները շատ տրամադրված են, որ Եւրոպան սպառնալից մնայ։ Նրանք նախ յարձակվեցան և ապա սկսեցին պնդել այն լուրը, որ իրեն թէ իշխան Բիսմարկ ուղւում է առաջարկել մի կոնգրէս գումարել զինավթ լինելու հարցը ընկելու համար։ Աւստրիական լրագրիները մի բանի մէջ գուցէ արդարացի են, այդ այն է, որ իշխան Բիսմարկ դժուար կարող է զինավթ լինելու հարցի կողմնակից լինել,—բայց թէ ինչու այդ լրագրիները սկզբունքով դէմ են զինավթ լինելուն,—այդ հասկանալի չէ։

—Ընդունում ապրող մի խումբ ֆրանսիացիներ այս օրերս մի ժողով գումարեցին, նպատակ ունենալով բողոքել այն վճռի դէմ, որ Պարիզի բարձրագոյն տեսանք կայացրել է Բուլանժէի դէմ։ Բուլանժէ այդ առիթով երկար ճառ խօսելով, և ինչպէս ասում են «ճառ տալ համ ցուրտ փրկելով» իր վերոն ճառը վերջացրեց սովորական ֆրանսիական «կեցցէ հանրապետութիւնը»։ Ի մեծ զիջողութիւն գնեցին իր այդ խօսքերին հաւատարմներ շատ քիչ են մնացել։

—Իր արկածախնդրութեամբ յայտնի Վիլսոն, ֆրանսիական հանրապետութեան նախկին նախագահ Գրեվի փեսան, որը իսկապէս և պատճառ եղաւ Գրեվի անկման, իր ընտանիքով Ամերիկա տեղափոխվեց։ Վաղուց այդպէս պէտք էր ասել։

Երբ վարձատրվում են բուռն ծափահարութիւններով։

Ճաշկերպութեան վերջանում է հանդարտ և հանդիսաւոր կերպով և մեծ բողոք անցնում են հարեան դաշինքը, որտեղ մեղ կաֆէ և սիգարներ են մատուցանում։ Խումբ-խումբ կանգնած բողոք խօսում ենք պատահած սկանդալի մասին. Ժիւլ Միմոն կանչել է աւելի մարտնչողներին, համոզում է նրանց հաշտվել և իրար ձեռք սեղմել, միայն թէ դրական միջադէպին կոնգրէսը չը վերջանայ մենամարտութիւններով։

Այդ ժամանակ մօտենում է ինձ գեղեցիկ և արտայայտիչ դէմքով մի երիտասարդ, տալիս է իր անունը, յայտնելով որ ինքն իրաւաբան և իրաւաբանական յայտնի ամսագրի խմբագիր է և դիմում է ինձ հետևելու խօսքերով։

—Վոյդեպի այսօրվայ փակման նիստին ես ուրախութեամբ լսեցի ձեր ճառախօսութիւնը, որից իմացայ թէ դուք արեւելքի էք, հայ էք։ Կուրք, պարտն, պատկանում էք մի արեւելեան ազգին, որը կարող է պարծենալ երեք հազար տարվայ հնադարեան քաղաքակրթութեամբ, և դուք բարոյապէս վերադառնում էք այժմ, իսկ մենք ֆրանսիացիներս, թէ բարոյապէս և թէ քաղաքականապէս արդէն անկման մէջ ենք գտնվում... Այսօրվայ սկանդալը տեսնելով ինչ կարծիք կունենաք, դուք, օտարազգի ներկայացուցիչները, մեր թեմաւորութեան մասին...

Ես պատասխանում եմ իմ նոր ծանօթին, թէ ես բնաւ դիտաւորութիւն չունեմ մասնաւոր դէպքը ընդհանրացնել, թէ այդ տեսակ մասնաւոր սկանդալներ ամեն ազգի մէջ են պատահում։ Մի թէ սկանդալներ չեն պատահել մի քանի տարի առաջ։ Միայնակում եք, երբ Ռուշկինի մահվան հարկարանման էին տօնում ու արձան էին դնում հռչակաւոր բանաստեղծի յիշատակին։ Եւ վերջապէս թէ ֆրանսիացիք քանի մի խոշոր պաշտօնականութիւններ ունեն, նրանք ուրիշ կողմից ունեն բացառիկ առաւելութիւններ, նրանք սիրալի են, հիւրասէր են օտարների վերաբերմամբ, նրանք իղէալիստներ են, նոր գաղափարներ շուտ ըմբռնող են, և րօպէական տրամադրութեան տակ

—Այս օրերս Պարիզում սկսվել է հրատարակվել մի նոր լրագիր «La Voix» անունով. դա ծայրայեղ ձախակողմնականների օրվանն է։ Այդ նոր լրագրի հրատարակողի նշանաբանը հետեւեալն է. «Ոչ Բուլանժէ, ոչ Ֆլէմէր»։ Լրագիրը պահանջում է, որ հանրապետութիւնը ազատի իրան արատաւորող անձնաւորութիւններից, պահանջելով մի և նոյն ժամանակ սահմանադրութեան վերադարձութիւնը՝ առկապետական ոգւով։

—Բուլանժէի բարեկամները լուր են տարածել Պարիզում, որ նա չուտով կամաւոր կերպով Ֆրանսիա պէտք է վերադառնայ։

—Հռօմից գրում են, որ Վատիկանի դրամական գործերը շատ էլ նախանձելի դրոյթեան մէջ չեն։ Այդ հանգամանքը աւելի է յուսահատեցնում պապական աթոռի երկրպագուներին, որովհետեւ դա նշան է, որ կաթօլիկ ժողովրդի «ոգևորութիւնը» պակասել է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Նորերում Գանիայում մի օրտաշարժ սպանութիւն կատարվեց։ Անտառում, երկու միացած կէլէ ծառի տակ, երկու դիակներ գտնվեցան։ Դրանք մի սիրահարված զոյգի դիակներն էին, որոնք անձնասպանութեամբ վերջացրին իրանց կեանքը։ Երիտասարդը, կոմ Դաւիթ անունով, չվերական լէյտենանտ էր, իսկ աղջիկը—Էլվիրա Մադիսոն անունով յայտնի պարսկոյ կին։ Բոլոր հանգամանքներից երևում է, որ վերջինչալ անձնասպանութեան շարժառիթը լէյտենանտ Դաւիթի նիւթական ճնշված դրոյթիւնն էր և այն անկախելի կացութիւնը, որը արգելում էր Դաւիթին ամուսնանալ գեղեցկուհի Էլվիրայի հետ։ Մի քանի տարի շարունակ լէյտենանտ Դաւիթ սիրահարված էր Էլվիրայի վրա, որը շատ բարոյական, խելոք և անկախ աղջիկ էր։ Նամակները, ընծաները, ոտանաւորները, պօստմաները կաշառեցին վերջապէս աղջկայ սիրտը և նա անձնատուր եղաւ։ Զանք, Շվեդիայում, մի քանի ամիս շարունակվեց երիտասարդ զոյգի երկրային երջանկութեան պէրիօդը, որ տալիս է անկեղծ սէրը։ Բայց Գանիա վերադառնալուց յետոյ նրանք երջանկութիւնը անձնասպանութեամբ վերջացաւ։ Շատ փաստերից երևում է, որ նրանց շաղկապի մէջ լիւսւոր դերը խաղում էր մաքուր, իղէալիստ սէրը։ Գիտելով թողմանը ներկայ էր դանիացի ջահիլ աղջիկների անազն բազմութիւնը, որոնք երկու գերեզմաններն ևս ծածկեցին թաքմ ծաղիկներից կազմված պսակներով և փնջերով։ Այդ

մեծ գործեր կատարող Այդ է պատճառը, որ օտարազգիները, մասնաւոր արեւելքը, որոնք սիրում են Ֆրանսիային, չեն հաւատում, որ այժմեան Ֆրանսիայի անշարժութիւնը և անգոյն կերպարանքը մի տևողական երևոյթ է, որը ժամանակ երբեք չը կարող է և կը գայ ժամանակ, երբ Ֆրանսիան նորից կը փայլի իր առաջվայ ամբողջ փայլով, նորից օտքի վրա կը կանգնէ և կրկին առաջվայ պէս զուլի կը կանգնէ համամարդկային քաղաքակրթութեան գործին...

Խօսակցից զգացված կերպով ձեռք սեղմելով, ասեց ինձ. «Ընդհանրապէս եմ, որպէս ֆրանսիացի, իմ հայրենիքին վերաբերմամբ ձեր բարի և միութարիչ խօսքերը համար»։

—Բայց մի բան ինձ թոյլ կը տամ նկատել, աւելացրել եմ, այդ այն է, որ ձեր մամուլը չէ կանգնում իր կոչման բարձրութեան վրա. մենք օտարազգիներս, այդ տեսակ սկանդալ չենք ընդհանրացնի, առանձին նշանակութիւն չենք տայ այդ տխրալի դէպքին, իսկ կը տեսնէք որ ձեր մամուլը, որը ձեր հրաշալի ցուցահանդեսի մասին միմիայն կցկտուր և անկապ յօդուածներ էր գրում, մի քանի անհաւանտողներ էր նուիրում միայն կոնգրէսների նկարագրութեան,—աղաղմանից հապտին սկսեցին կը նուիրէ այսօրվայ ճաշկերպութիւն պատահած ամօթալի սկանդալի նկարագրութեան...

Եւ ճշմարիտ այսպէս էլ եղաւ իմ խօսքերը կատարելապէս արդարացան. հետեւեալ օրերը Պարիզի ամբողջ մամուլը ճաշկերպութիւն պատահած սկանդալով էր զբաղված. իսկ գրական կոնգրէսի նիստերին, կոնգրէսում յարուցված հարցերին ու նիստերում եղած վիճաբանութիւններին Պարիզի լրագրիները օրական հաղի հաղ մի քանի աննշան տողեր էին նուիրում։

Գրիգոր Արթուր

տրագիկական մեծ տպաւորութիւն գործեց Դա-
նիայի և Շվեդիայի հասարակութիւնները վրա:

Վիեննայում 70 տարեկան հասակում վախճան-
վեց աւստրիական ամենամեծ ընտանեկան
ներքի մէջը—Լիւդվիգ Ֆոգլա, որին անուանում
էին Վիեննայի Ալֆրէդ դէ-Միւսսէ:

Բորոտում վախճանվեց 70-ամեայ հասակում
կարգինալ Գիլբերտ, ֆրանսիական եպիսկոպոսնե-
րից առաջինը, որը իր հպատակութիւնը յայտնեց
հանրապետական կառավարութեանը և ապա-
րուցանում էր իր գրեթէ անընդունակ, որ դէմօկրա-
տիական զարգացումները հակառակ չէին եկեղեցու
վարդապետութիւններին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 օգոստոսի: Բարձրագոյն Ու-
կազ Ի նկատի ունենալով Մեծ Իշխան Կոնս-
տանտին Նիկոլաւիչի հիւանդ դրութիւնը, Նո-
րին Բարձրութեան գործերի և կայքի կառավա-
րութիւնը Մեծ յանձնեցինք Մեծ Իշխանուհի Ա-
լեքսանդրա Եստֆօնային և Մեծ Իշխան Կոնս-
տանտին Կոնստանտինովիչին: Հրատարակված է
պետական խորհրդի կարծիքը՝ հարաւարեման
երկաթուղիների կայարաններում էլէկտրոմոտորներ
կառուցելու մասին: Հրատարակված է Ա. Բու-
րնշտայնի պրեմիայի համար միջազգային կոն-
կուրս նշանակելու մասին: Գրաւազուրկը 25,000
ր. է: Պրեմիան պէտք է տրվի իւրաքանչիւր հինգ
տարին մի անգամ, իւրաքանչիւր պրեմիան պէտք
է լինի 5,000-ական ֆրանկ, և մէկը պիտի տրվի
կոմպոզիտորի, իսկ միւսը պիտի տրուի երկու
պրեմիան էլ կարող է տրվել մի և նոյն անձին:
Կոնկուրսի տեղերն են՝ Պետերբուրգ, Բերլին,
Վիեննա և Պարիզ:

Վիեննա, 19 օգոստոսի: Պարգայի ուսանող-
ները արդէն կազմեցին նոր կանոնադրութիւն, և
հարկաւոր դէպքում կը կազմեն նոր ընկերութիւն
փակված «Ընթերցասիրաց» ընկերութեան փո-
խարին:

ԼՕՆԴՈՆ, 19 օգոստոսի: Գործադուլ արած
բանուորների գլխաւոր մասնաժողովը հրատարա-
կել է մի հրահրագիր, որով հրաւիրում է բոլոր
սեռակի բանուորներին երկուշաբթի օրվանից աչ-
խատանքները դադարեցնել, եթէ մինչև չարաթ
կէսօր Լոնդոնի նաւակառօցների ընկերութիւն-
ները չեն համաձայնի ընդունելու գործադուլ ար-
ած բանուորների բոլոր պահանջները: Այսօր
տեղի ունեցաւ պարլամենտի փակումը հետեւեալ
զահական ճառով. «Անգլիայի յարաբերութիւննե-
րը դէպի օտար պետութիւնները կրում են սրտա-
կից ընտանուրթիւն: Վիկտորիան թագուհու նա-
խաձեռնութեամբ, Բելգիայի թագաւորը համա-
ձայնվել է աշխարհ Բրիտանիոյ եւ Եւրոպական պե-
տութիւնների ղեկավարած զուգարկը՝ քննելու
ճորտերի առեւտրի այժմեան հարցը, և այն միջոց-
ները, որոնցով կարելի է վերջ տալ այդ առե-
ւտրին: Նաւատորմը զորացնելու համար նշանա-
կած զուգարկը և պաշտպանութեան միջոցները
թող են տալիս Անգլիային բոլորովին ապահո-
ված համարել իրան և զբաղվել առեւտրով:

ԻՕԿՈՒՍՍՈՒ, 19 օգոստոսի: Աւերիչ փոխգնդ-
աւի հեղեղի պատճառով, որ տեղի ունեցաւ Օսկա-
կի մօտ, սպանվեցին 10,000 մարդ, 20,000 մարդ
անապատաւն է մնացել, սարսափելի տղաւոր-
թիւն է տիրում:

ԲԵՐԼԻՆ, 19 օգոստոսի: Դաշնակցական խոր-
հուրը վճռեց չվեցարական անարխիստների
հրաւիրագրերը կազմողներին և տարածողներին
դէմ դատ սկսել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 օգոստոսի: Մեծ Իշխանուհի
Մարիա Պաւլովնա գիշերը բաւական հանգիստ
անցկացրեց, արիւնհոտութիւն չեղաւ, հիւանդի
ոյժը, ինչպէս երևում է, գինու և ուրիշ սննդա-
բար կերակուրների շնորհիւ չէ պակասում: Պե-
տական կալուածների մինիստրը վերադարձաւ
Պետերբուրգ:

ՆԻՃՆԻՆՈՎԳՐՈՐԴ, 19 օգոստոսի: Ղլարի և
Անդրկովկասեան գինու գինը 25-ից մինչև 30%
աւելի թանկ է, քան անցեալ տարին: Գինիների
մեծ մասը գնված է Մոսկովա տանելու համար:

ԱԹԵՆ, 19 օգոստոսի: Կրիտէ կղզին նորից

զօրե եկաւ Շաքիր փաշան հրատարակեց նոր
պրօկլամացիա, որի մէջ յայտնում է՝ թէ զօրք է
ուղարկվում կարգը վերականգնելու համար.
դիմադրողներին նախազգուշութիւն է տրված, որ
գինուրական դատի կենթարկվեն:

ՊԱՐԻՉ, 19 օգոստոսի: Պարիզեան կոմսը դի-
մեց ժողովրդին մի գրութեամբ, որով առաջար-
կում է կազմել պահպանողականների դաշնակցու-
թիւն: Կոմսը ասում է, որ սահմանադրութեան
վերադննդութիւնը վերջ կը տալ նրա գերութեա-
նը և կը վերականգնեն հանրապետութեան
խաղաղութիւնը:

ՎԻԵՆՆԱ, 19 օգոստոսի: «Beichwehr» լրագիրը
հաղորդում է, որ գլխաւոր շտաբի զօրահանգէսը
պէտք է լինի սեպտեմբերի 8-ից մինչև 21-ը: ԼԵ-
րագիրները յայտնում են, որ զօրահանգիսի որո-
շած կարգը ոչինչ կապ չունի որ և է քաղաքա-
կան հանգամանքի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 օգոստոսի: Երէկվայ բիւլէ-
տէնը հաղորդում էր, որ Մեծ Իշխանուհի Մարիա
Պաւլովնայի դրութիւնը լաւ է. նպատակայար-
մար մնալով և գինով պահպանվում է հիւան-
դի ոյժը: Բարձրագոյն հրամայված է, որ Իշխա-
նուհի Անատոսիա Նիկոլաւիչն Բոմանովկայա
ղքունի Լեյտենենթընայա, իր ամուսնուն յա-
տուկ տիտղոսի համաձայն անուանակոչվէր կայ-
սերական Բարձրութեամբ: Իրկուստի գեներալ-
նահանգապետ Գորէմկին երէկ ուղևորվեցաւ իր
պաշտօնատեղին. «Прас. Вест.» լրագիրը հերքե-
լով լրագիրների ենթադրութիւնը, որ համալսա-
րաններում կազմված առաջին պետական յանձ-
նաժողովները համեմատաբար քիչ ուսանողների
կը քննեն, յայտնում է, որ այժմ, երբ լոնդրե
տալու ժամանակամիջոցը դեռ չէ լրացել, արդէն
քննիչ յանձնաժողովին տուած է 583 խնդիր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 օգոստոսի: Մեծ Իշխանուհի
Մարիա Պաւլովնայի առողջութեան մէջ նկատ-
վում է մի նշանաւոր փոփոխութիւն դէպի լաւ:
Արիւնհոտութիւն չը կար:

ՊԱՐԻՉ, 21 օգոստոսի: Այսօր առաւօտեան
հասան այստեղ իտալական բանուորների պատ-
գամաւորները և երկաթուղու կայարանում ըն-
դունվեցան Պարիզի բանուորների երկու պատգա-
մաւորներով ու քաղաքային վարչութեան խորհր-
դի երկու անդամներով: Առանձին դէպք պատա-
հած չէ: Երէկ, երբ իտալացի պատգամաւորները
երկաթուղով ուղևորվում էին Լիւզին, անյայտ
մարդիկ աղաղակում էին՝ «Լորէի կրիսպի»: Ցոյց
անողներին շատերը ձերբակալվեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՒՄ

Օգոստոսի 18-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծեւ.	95 ր. 90
Բերլինի վրա 100 մարկ	46 > 90
Փարիզի վրա 100 ֆրանկ	37 > 95
Ոսկի — արծեւ	7 > 64
Մաքսային կուպոններ	153 > 25
Արծաթ	1 > 10
Բորսային դիվիդենդներ	6 > 70
Պետակ. բանկ. 5% տոմս. 1-ին շրջանի	98 > 62
— — — — — 2-րդ —	98 > 62
— — — — — 3-րդ —	98 > 87
— — — — — 4-րդ —	98 > 62
— — — — — 5-րդ —	98 > 50
— — — — — 6-րդ —	98 > 75
Նոր 4% — — — — —	83 > 37
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	98 > 87
— — — — — 2-րդ —	98 > 87
— — — — — 3-րդ —	98 > 87
Ներքին 5% առաջին փոխառութ.	264 > —
— — — — — երկրորդ —	247 > 25
5 1/2% ընդհան. — — — — —	102 > 25
Ոսկեայ բէնտա. — — — — —	174 > —
Եօթերորդ կոնսոլիդ. փոխառ.	141 > —
Նոր երկաթուղային բէնտա. — — — — —	98 > 62
5% գրաւակ. — — — — —	—
— — — — — թղթեր կալուած.	—
— — — — — փոխ. կրեթ. ընկ. մետ. — — — — —	147 > 50
— — — — — — — — — — —	92 > 50
Գրաւ. թղ. Աշու. բանկի — — — — —	98 > 26
Գիւղական բանկի — — — — —	102 > 25
6% գրաւ. թղ. Թիֆլիսի — — — — —	97 > 50
— — — — — — — — — — —	97 > 75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդի- գացիաներ — — — — —	94 > 62
Մոսկովայի քաղաք. օրդիգացիաներ. — — — — —	94 > —
Օդէսայի — — — — —	93 > 75
Թիֆլիսի քաղաք. կրեթ. ընկ. օրդ. — — — — —	84 > 50
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը հանդարտ է:	—

Խմբագիր - հրատարակիչ ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԿՅՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ

Մի երիտասարդ, որ աւարտել է հայկական ձայնագրութիւնը և ստացել է իրաւունք ուսուցչու-
թեան հոգեւոր ծայրագոյն իշխանութիւնից, ցանկանում է ուսուցչութեան պաշտօն: Պատրաստ է
գաւառներ գնալու: Ցանկացողները մանրամասն պայմանների մասին թող դիմեն՝ Тифлисть, Ав-
лабартъ, Свящ. Казаросу Овсепьянцу.

1—3

Գ. Կարգի մի ՈՒՍՈՒՑԻՉ ցանկանում է տեղ ունենալ մեր դպրոցներում:
Ցանկացողները թող դիմեն նրան իրանց պայմաններով հետեւեալ հասցեով.
Эривань, Сиракану Теръ-Мартиросянцъ:

1—3

Մի քանի տարի ուսուցչութեամբ պարապող ՕՐԻՈՐԻԸ, որը աւարտել է ուստաց միջնակարգ
դպրոցում, ցանկանում է հայոց դպրոցներում դասատու լինել ուստաց լեզուից և թաւառութիւ-
նից առաջին երեք բաժանմունքներում, նաև վարժուհի կար ու ձեռնագործութեան, շարա-
թական 24 դասով և տարեկան 500 րուբլի ուժեղով: Հասցէն՝ Ново-Ваязетъ, Кеворку Арцруни.

1—5

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ—ՊԱՆՄԻՈՆ

ԵՒ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԵՉ

Օր. Ս. Վ. ԱՐԼՈՒԹԻՆՍԿԻՑ—ԴՕԼԳՈՐՈՒԿԻՑ

Երեւանի ընդունելութիւնը Օգոստոսի 20-ից: Պարապմունքները սկսվելու են Սեպտեմբերի
1-ից: Ուսումնարանը գտնվում է Ֆրէյլինսկայա փողոցում, տուն Կորգանովի, № 4:

1—3 (Ե. Կ. Շ.)

ՀԱՅՈՒՆԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ընկե-
րութեան կար ու ձեռք դպրոցը այժմ գտնվում է Սերգէյեւսկի փողոցում Շաքինեանցի
տանը և թէ աշակերտուհեաց ընդունելութիւնը կը սկսվի օգոստոսի 25-ին և կը տևի
մինչև օգոստոսի 31-ն, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամ:

Այդ դպրոցը մտնել ցանկացողները իրանց խնդրագրի հետ պէտք է ներկայացնեն
ծխական դպրոցի վկայականը:

3—5

ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի տաւրկայք սորա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրա-
կան Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուաբանութիւն համրէի վրա, 5) Առևտրական Թղթակցութիւն, 6)
Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղադրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնա-
կարանում, Սոլոյակում, Ալեքսանդր ֆրիդմանովի տանը, № 9 Սերգէյեւսկայա և
Նաղորնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները
կարելի է ստանալ ՁԻՒԱՊԵՍ Եղը. Ծովանոցների բանկային գրասենեակում և
Կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմ-
նողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

22—20 (Ե. Կ.)

С. А. ЕПАЗАРОВЪ

ИЗСЛѢДОВАНИЯ ПО ИСТОРИИ УЧРЕЖДЕ- НІЙ ВЪ ЗАКАВКАЗЬИ

ЧАСТЬ I

СЕЛЬСКАЯ ОБЩИНА

Сословный строй, внутренняя организация и управление общины въ свя-
зи съ землевладѣніемъ, водовладѣніемъ и податнымъ обложеніемъ.

Цѣна 2 р. 75 к.

Продается въ Казани, въ книжномъ магазинѣ А. А. Дубровина.

7—10 (Ե)

Մարմնի մասերը, մանաւանդ ոտների մասերը
փոխելուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

Ժախվում է դիտարկում և զբոսնում մօտ
Եւրօպայի նշանաւոր քաղաքներում և կայսրու-
թեան բոլոր քաղաքներում: ԳԼՍԱՌՈՐ ՊԱՆՏՍ
գտնվում է ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, հնարողի, դեղատան
տիրոջ, ֆարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ
մօտ, Էլէկտրալայա փողոց, № 39. Գաւմանի
մեծ արկղը արժէ վարչապալում 50 կ., փոքրը
30 կօպ.

ՊԵՏԻ Ե ԶԳՈՒՆԱՆԱԿ ԿԵՂՇՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փո-
շու զործածութեան բացատրութիւնը և ֆարիգի
ցուցահանդիսի մեղաւնեւը:

Մ. 24869

8—10 (Ե)

Въ редакціи газеты „МШАКЪ“ прода-
ются слѣдующія брошюры: 1) „Экономич.
Положеніе Турецкихъ Армянъ“, публич-
лекція Д—ра Г. Арцруни, перев. съ арм.
А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Eco-
nomische Lage der Armenier in der Türkei,
ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni,
übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien,
ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über-
setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.

Иногородные, желающіе получить бро-
шюры, благоволятъ присылать по 30 коп.
почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“,
или Tiflis, Redaction „Mschak“. (Ե)